եղաւ՝ ամբողջապէս սպիտակ հագած, որ իսկոյն պահանջեց մեր ճապոնական անցագրերը: Այդ անցագիրը անհրաժեշտ է ամեն եւրոպացու, որ կամենում է ներքին գաւառները ոտք դնել: Տոմսակ գնելիս՝ նոյնպէս հարցրին այդ անցագիրը:

Դեռ բաւական ժամանակ կար մեր գնացքին: Ուզեցի ելնել հարթակը, չը թողին: Ստիպւած էի բաւականանալու կայարանի պատուհանով: Գնացքները անընդհատ գնում էին ու գալիս: Շարժումը մեծ էր: Ճապոնացին ճամփորդութիւն սիրում է: Վագոնները լի էին բերնէ բերան:

Երբ հերթը վերջապէս մեզ հասաւ, սրահի դռները լայն բաց արին ու մենք խուռն բազմութեամբ դուրս թափւեցինք հարթակը. մեր առաջը փակած էր վանդակով. ուղեւորների համար մի նեղ անցք կար միայն, ուր կանգնած էր կօնդուկտօրը եւ ստուգում էր տոմսակները:

Ամենքը խռնւում են դէպի այդ մուտքը, հրում, սեղմում, մինչեւ որ վերջապէս դուրս են գալիս վագոնների առաջ եղած ազատ տեղը, բոլորովին ուժասպառ ու ժմրռտւած:

Ուղին նեղ գիծ է, վագոնները փոքր, նստարանները պատի տակ:

Գնացքը կայարանից դուրս սողաց թէ չէ, մեր առաջ բացւեց ծովը իր բոլոր գեղեցկութեամբ եւ հեռուն կանգնած շոգենաւերով:

Հետզհետէ այդ կապոյտ շերտը սկսեց նեղանալ, հեռանալ, մինչեւ որ իսպառ կորաւ աչքից: Առջեւս փռւած էր այժմ լայն դաշտը, ամբողջապէս ծածկւած բրնձի կանաչ տունկով: Արդէն ծանօթ տեսարան: Նոյն ջրով ծածկւած մարգերը, նոյն բանւորները մինչեւ ծունկը ջրի մէջ աշխատելիս: Զկային միայն առուները իրանց կարկաչով,